ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 04

գ. Ջրաբեր 21 հունիսի 2024թ.

2024 թվականի հունիսի 21-ին, ժամը 18.00-ին, ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Ջրաբեր բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում (հասցեն՝ գ. Ջրաբեր 1-ին փողոց 13 վարչական շենք) կայացավ «ՖՐԱԿՑԻԱ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված Բյուրեղավան համայնքի Ջրաբեր գյուղում գտնվող 07-055-0212-0087 կադաստրային ծածկագրով հողամասում լիթոիդային պեմզայի հանքավայրի առանձնացված տեղամասում օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվության ժամկետի երկարացման վերաբերյալ հանրային քննարկումներ:

Մասնակցում էին՝

«ՖՐԱԿՑԻԱ» ՓԲԸ-ի ներկայացուցիչ Հովհաննես Զաքարյանը, ՓԲԸ-ի գլխավոր հաշվապահ Կոլյա Ստեփանյանը, Ջրաբերի վարչական ղեկավար Բորիկ Դավթյանը, աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ Հասմիկ Սիմոնյանը , Ջրաբեր բնակավայրի բնակիչներ (մասնակիցների ցուցակը կցվում է):

Օրակարգում՝

1" Ջրաբեր գյուղում գտնվող լիթոիդային պեմզայի հանքավայրի առանձնացված տեղամասում օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվության ժամկետի երկարացման հարցը:

Լսեցին՝ բացման խոսքով հանդես եկավ Ջրաբերի վարչական ղեկավար Բ. Դավթյանը: Նա նշեց, որ «ՖՐԱԿՑԻԱ» ՓԲԸ-ն հայտ է ներկայացրել Ջրաբեր բնակավայրում գտնվող լիթոիդային պեմզայի հանքավայրի առանձնացված տեղամասում օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվության ժամկետի երկարացման վերաբերյալ:

Այնուհետև «ՖՐԱԿՑԻԱ» ՓԲԸ-ի ներկայացուցիչ Հովհաննես Զաքարյանը ներկայացրեց ընկերության գործունեությունը, հանքավայրի արդյունահանման աշխատանքները և ներդրումները:

Ելույթ ունեցավ նաև ընկերության գլխավոր հաշվապահ Կոլյա Ստեփանյանը, պատասխանեց բնակիչների կողմից բարձրացված հարցերին:

Եղան քննարկումներ բնակավայրի բնակիչների և ընկերության ներկայացուցիչների միջև, որի արդյունքում բնակիչները միաձայն մերժեցին հանքավայրի արդյունահանման թույլտվության ժամկետի երկարացման վերաբերյալ հայտը:

Վարչական ղեկավար՝ Բ. Դավթյան

Մասնակիցների ցանկ

1. Գագիկ Բարսեղյան – Գարեգին Չեփչյան
2. Արմեն Հասրաթյան – [illegible]
3. Գրիգոր Հովսեփյան [illegible]
4. Գոռ Հովհաննիսյան [illegible]
5. Սերգեյ Խաչատրյան [illegible]
6. Ցոլակ Հովսեփյան «Երևանի [illegible]
7. Գուրգեն Հարությունյան [illegible]
8. [illegible]
9. Մանվել Սարգսյան [illegible]
10. Հայկ [illegible]
11. Հրաչիկ [illegible]
12. Սամվել [illegible]